Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2021 թ.
փետրվարի 2 -ի N 77 - Ա
որոշման

«ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻՆ»

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է 2020 թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծած պատերազմի հետևանքով տեղահանված և փաստացի Հայաստանի Հանրապետությունում գտնվող արցախցիներին ցուցաբերել հետևյալ աջակցությունը՝ • Հոգալ 150 մարդու կացության ծախսերը 3 կացարաններում, • Դրամական աջակցություն ցուցաբերել 1,850 մարդու՝ 78,000-ական դրամի չափով • Տրամադրել սոցիալ-հոգեբանական աջակցություն 900 մարդու
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահման-ված արտոնություններից՝ խնայված գումարներն ուղղելով ծրագրի շահառուների թվի ավելացմանը:
3.	Բարեգործը	«Դիակոնիա աղետից օգնություն» (Diakonie Katastrophenhilfe), Կառոլինե-Միխաելիս 1 փողոց, 10115, Բեռլին, Գերմանիա
4.	Ծրագիրը կատարողը	Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական «Կլոր սեղան» հիմնադրամ ՀՀ 1101, Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ՀՎՀՀ՝04717139
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Արագածոտնի, Արմավիրի, Կոտայքի, Լոռու Շիրակի մարզերում ապաստանած 2,000 Արցախից ինքնաբուխ ժամանած հայրենակիցներ կստանան մարդասիրական օգնություն: Օգնություն ստացողների ցուցակները համաձայնեցվում են մարզպետարանների հետ: Բնագավառը՝ սոցիալական:
6.	Ծրագրի բյուջեն	181,446,000 դրամ (համարժեք 300,000 եվրոյին)
7.	Բարեգործություն ստացողը	Արցախից ինքնաբուխ ժամանած 2,000 անձինք, ովքեր բնակվում են Հայաստանում՝ ժամանակավոր կացարաններում և հյուրընկալ ընտանիքներում:

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	13.02.2021 թ. – 31.03.2022 թ.
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի միջոցառումները հետևյալն են՝ Կացարաններում բնակվող 150 անձի համար սննդի, սան-հիգիենիկ պարագաների ձեռքբերում և կոմունալ ծախսերի հատուցում: Իրականացվելու է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմերի կողմից, Կացարաններն են՝ Արագածոտնի մարզի Սաղամոսավանի Հայորդաց տունը, Մայր Աթոռի Էջմիածնի կացարանը և Կոտայքի թեմի Ծաղկաձորի ճամբարը: Ընդամենը ֆինանսական միջոցները՝ 23,250,000 դրամ: Իրականացման ժամկետը՝ 13.02.2021 թ. – 31.12.2021 թ. Դրամական աջակցության տրամադրում Արցախից ժամանած 1,850 անձի: Նախատեսված է յուրաքանչյուր անձի հատկացնել 78,000-ական դրամ, մինչդեռ 0-18 տարեկան երկու անչափահասի համար վճարումը կկատարվի մեկ 78,000 դրամի չափով: Շահառուների ընտրության չափանիշները հետևյալն են՝ բազմանդամ ընտանիքներ, ծերեր, հիվանդներ, հաշմանդամներ: Ընդամենը ֆինանսական միջոցները՝ 144,300,000 դրամ: Իրականացման ժամկետը՝ 13.02.2021 թ. – 31.12.2021 թ. Սոցիալ-հոգեբանական աջակցություն Նախատեսվում է կարիքներն և խնդիրները վերհանելու և դրանց արդյունավետ լուծումներ առաջարկելու նպատակով կատարել տնայցեր պատերազմից տուժած ընտանիքներին: Ծրագրի ամբողջ ժամանակաշրջանում սոցիալական աշխատողներն ու հոգևորականները շահառուներին կտրամադրեն սոցիալ-հոգեբանական աջակցություն՝ զրույցների և քննարկումների միջոցով: Ընդամենը ֆինանսական միջոցները՝ 1,848,000 դրամ (11 x 6 x 28,000): Իրականացման ժամկետը՝ 13.02.2021 թ. – 31.01.2022 թ. Ծրագրային անձնակազմի ծախսեր Ծրագրի իրականացման համար ներգրավված են լինելու «Կլոր սեղան» հիմնադրամից մեկ ծրագրի տնօրեն, մեկ պատասխանատու, 2 օգնական և մեկ վարորդ: Ֆինանսական միջոցները՝ 5,706,580 դրամ (11x (1 x 136,000 + 1x 165,000 + 2 x 76,000 + 1 x 65,780)):

		Իրականացման ժամկետը՝ 13.02.2021 թ. – 31.12.2021 թ. Վարչական անձնակազմի և այլ ծախսեր «Կլոր սեղան» հիմնադրամի աշխատակազմն իրականացնելու է ստուգայցեր ծրագրերի իրականացման վայրեր, ծրագրերի մշտադիտարկում, պատրաստելու է հաշվետվություններ, կազմակերպվելու է ծրագրի աուդիտը: Ներգրավված են լինելու գլխավոր հաշվապահը, հաշվապահը և իրավաբանը՝ ((11x(1x165,000+1x81,000+1x36,400))=3,108,050 դրամ աշխատավարձ և 3,233,370 դրամ վարչական և այլ կազմակերպական ծախսեր) Ֆինանսական միջոցները՝ 6,341,420 դրամ: Իրականացման ժամկետը՝ 13.02.2021 թ. – 31.03.2022 թ. Մոնիթորինգին և շուկայի ուսումնասիրությանը վերաբերող ծախսեր Հյուրասիրության և տրանսպորտային ծախսեր – 1,266,000 դրամ
10.	Ձեռքբերվող (ներմուծ-վող) ապրանքների ու ծա-ռայությունների համա-ռոտ նկարագիրը, ծավալ-ները և նախատեսվող գինը	Մսունդ, սան-հիգիենիկ պարագաներ և կոմունալ ծախսեր: Գնումները կատարվելու են Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմերի կողմից՝ Կլոր սեղան հիմնադրամից ստացված դրամաշնորհների միջոցներով: Ընդամենը՝ 23,250,000 դրամ (ակնկալվում է ԱԱՀ-ից ազատում)
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրային անձնակազմի ծախսեր – 5,706,580 դրամ Վարչական անձնակազմի աշխատավարձեր – 3,088,800 դրամ Վարչական այլ ծախսեր (կոմունալ, հեռահաղորդակցություն) – 720,000 ՀՀ դրամ Հյուրասիրության և տրանսպորտային ծախսեր – 1,266,000դրամ (ակնկալվում է ԱԱՀ-ից ազատում) Աուդիտորական ստուգում – 1,300,770 ՀՀ դրամ (ակնկալվում է ԱԱՀ-ից ազատում) Ընդամենը՝ 12,048,000 դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավար-ման, տեղական ինքնա-	Հայաստանյան «Կլոր սեղան» հիմնադրամն համագործակցում է տեղական ինքնակառավարման մարմինների, մարզպետարանների, ՀԱԵ թեմերի, տեղական կազմակերպությունների հետ, որոնք գործունեություն են ծավալում ՀԿՍ-ի աջակցությամբ իրականացվող ծրագրի վայրերում:

	կառավարման մարմին-ների, այլ կազմակերպու-թյունների հետ	
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի վերահսկողությունն իրականացվում է գործադիր տնօրենի, գլխավոր հաշվապահի և ծրագրերի ղեկավարի կողմից, իսկ ամենօրյա վերահսկողությունը կատարում է ծրագրի պատասխանատուն, որը պարբերաբար այցեր է կատարում ծրագրի իրականացման վայրեր՝ մշտադիտարկման նպատակով՝ ներկայաց-նելով հաշվետվություններ: Պարտավորվում ենք հաշվետվություն ներկայացնել համաձայն Հայաստանի հանրապետության կառավարու-թյան 2003 թ-ի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ